

100 Հարց Ա.

Հաղորդութեան Մասին

95) Ե՞րբ բաղարջի հարցը
քննարկուեցաւ Յոյներուն եւ Լա-
տիններուն միջեւ:

Այս խնդրին չուրջ վիճաբանու-
թիւնները սկսան ԺԱ. դարուն, երբ
16 Յուլիս 1054-ին պապական նուի-
րակները կարդինալ Հիւմբերտի (1061)
գլխաւորութեամբ կը մտնեն Ս.
Սոֆիայի տաճարը եւ Ս. Սեղանին կը
դնեն Պապի կոնդակը, որով Կ. Պոլոյ
Միքայէլ Կերուլարիոս (1043 - 1058)
պատրիարքը եւ անոր հետեւորդները
կը զրկէ եկեղեցական Հաղորդութե-
նէն: Այնուհետեւ երկու կողմերը կը
նզովեն զիրար: Փաստօրէն 451 թ. յե-
տոյ՝ 1054 թ. ընդհանրական եկեղեցին
կանոնական եւ ծիսական տարածայ-
նութիւններու պատճառով կը բաժնր-
էի երկրորդ անգամ: Արեւմուտքի մէջ
կը գործէ Հռոմէական կաթոլիկ
եկեղեցին՝ կեղրոնը ունենալով
Հռոմը, իսկ Արեւելքի մեծ Ռւղղափառ
եկեղեցին՝ Կ. Պոլոյ: Եկեղեցւոյ այս
բաժնականի անոր, որով կը լուծէր, այլ
նաև զԱստուած իր Հայրը կ'անուա-
նէր, եւ այսպէս Ինքնան ԱՍՏՈՒ-
ԹՈՅ ՀԱԻԱՍԱՐ Կ'ԼՆԷՐ» (Յով. 5.18): Յիսուս ցոյց տուաւ, թէ Հայրն
Աստուած ամէն դատաստան Որդիին
յանձնած է, «որպէսպի ամէնքը պատ-
ւեն Որդին, ինչպէս հայրը կը
պատուեն:

Սիրելի ընթերցող, ԾՐԱԳ բերքը ա-
մէն Կիրակի կը բաժնուի մեր ժողո-
վուրդին, եկեղեցիներու բանկալին
մօս: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտուել
«Jerak կամ ՃՐԱԳ», ապա
սեղմել «Like»ը, կարդալու կամ ան-
դամագրուելու համար:

ՀԱՍՑԵ.

**ԱԴԱՆԴԱՌԱԿԱՆ
ՇԱԲՈՒՄՆԵՐ**

ՐԱՍՔԱՎԱՆՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ
3. ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐԴԻՆ՝
ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈ

բ - Կ'ըսէն՝ թէ Յիսուս, Աստուծոյ
Որդին, Աստուծոյ հետ մէկ, նաև հա-
ւասար չէ, բայց անկէ վար «Աստ-
ւած» մըն է, ստորադաս Հօրմէն:

Այս հեթանոսական բացատրութիւ-
նը բացարձակապէս կը հակասէ Աստ-
ւածաշունչի ճշմարտութեան: Տակա-
ւին Քրիստոսի ծնունդէն ութ դարեր
առաջ, Եսայի մարգարէ կ'ըսէր, թէ իր
ժամանակ ծնելիք մանուկը պիտի
ըլլար ու կոչուէր «Սքանչելի, Խոր-
հրդակից, ՀՕՐ ԱՍՏՈՒԾՈՅ, Յակա-
տանականութեան Հայր, Խաղա-
ղութեան իշխան» (Ես. 9.6):

Յովհաննու Աւետարանին մէջ կը
տեսնենք, թէ Հրեաներ Յիսուսը
«կ'ուզէին սպաննել, որովհետեւ ո՛չ
միայն Շաբաթ օրը կը լուծէր, այլ
նաև զԱստուած իր Հայրը կ'անուա-
նէր, եւ այսպէս Ինքնան ԱՍՏՈՒ-
ԹՈՅ ՀԱԻԱՍԱՐ Կ'ԼՆԷՐ» (Յով. 5.18): Յիսուս ցոյց տուաւ, թէ Հայրն
Աստուած ամէն դատաստան Որդիին
յանձնած է, «որպէսպի ամէնքը պատ-
ւեն Որդին, ինչպէս հայրը կը պատուեն:

Սիրելի ընթերցող, ԾՐԱԳ բերքը ա-
մէն Կիրակի կը բաժնուի մեր ժողո-
վուրդին, եկեղեցիներու բանկալին
մօս: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտուել
«Jerak կամ ՃՐԱԳ», ապա
սեղմել «Like»ը, կարդալու կամ ան-
դամագրուելու համար:




ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ
ՔԻՐԱԿԻ, 11 ՓԵՏՐՈՒԱՐ 2018
ԹԻՒ 6

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱԾՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

**Ես. 58.1-14 Յև. 13.11-14.25
ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՆ ՄԱՏԹԵՈՍԻ 6.1-21**

Զգո՞յշ, Աստուծոյ հանդէպ ձեր պարտաւորութիւնները մարդոց ներկայու-
թեան մի՛ կատարէք ցոյցի համար, որովհետեւ այդ պարագային վարձատրութիւն
պիտի չստանաք ձեր երկնաւոր Հօրմէն:

Երբ ողորմութիւն կ'ուզես տալ փող ու թմրուկով մի՛ ըներ, մարդոց ուշադրու-
թիւնը գրաւելու համար, ինչպէս կեղծաւորները կ'ընեն ժողովարաններու մէջ եւ
հրապարակներու վրայ՝ մարդոցմէ գովասանք ընդունելու ակնկալութեամբ: Վս-
տահ եղէք, միայն այդ է անոնց վարձատրութիւնը: Ընդհակառակը, դուն երբ ողոր-
մութիւն պիտի տաս, ձախ ձեռքդ բող չգիտնայ, թէ ինչ կ'ընէ աջ ձեռքդ: Այսպիսով
ողորմութիւնն զարդնի ըրած կ'ըլլաս եւ քու երկնաւոր Հայր՝ որ անտեսաննելի է,
կը տեսնէ կատարած եւ քեզ կը վարձատրէ յայտնապէս:

Նմանապէս, երբ կ'աղօթես կեղծաւորներուն մի՛ նմանիր, որոնք կը սիրեն
ժողովարաններուն մէջ եւ հրապարակներուն անկինը աղօթեն, որպէսզի մարդիկ
իրենց աղօթելու տեսնեն: Վստահ եղէք, միայն այդ է անոնց վարձատրութիւնը: Այլ
երբ պիտի աղօթես, մտիր սենեակի, գոցէ դրուը եւ աղօթէ քու երկնաւոր Հօրդ, որ
անտեսաննելի է եւ Հայրը, որ կը տեսնէ կատարածդ, քեզի պիտի հատուցէ յայտ-
նապէս: Տակաին, երբ կ'աղօթես, մի՛ շատախօսեր հեթանոսներուն նման, որոնք
կը կարծեն, որ եթէ երկար աղօթեն Աստուած պիտի լսէ զիրենքը: Արդ, մի՛ նմանիր
անոնց, որովհետեւ ձեր Հայրը զիտէ ինչ որ պէտք է ձեզի, նոյնիսկ երբ տակաին
իրմէ խնդրած չէք:

Ուրեմն այսպէս աղօթեցէք՝

**«Հայր մեր ԵՐԿԱՎՈՒՐ, ՄԵՐԱԲԱՆՈՒԹԻՇ ԱՆՈՒԱՆ.ԹՈՐ ԳԱՅ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ, ԹՈՐ
ԿԱՏԱՐՈՒԹԻՇ ՔՈՒ ԿԱՋՔ, ԻՆՉՈՒԵ ՈՐ ԵՐԿԻՆՔ ՄԵԶ, ԱՅՆԹԵ ԱՐԿՐԻ ԿՐՈՅ:»**

**ԱՄԵՆՈՒԵՎ ՄԵՐ ՀԱՅ ԱՅՆՈ ԵՒՍ ՏՈՒՐ: ՆԵՐԵՇ ՄԵՐ ԽԱՆՉԱԲԵՐԸ ԻՆՉՈՒԵ ՈՐ
ՄԵՆՔ ԿԵ ՆԵՐԵՆՔ ՍԱՌՈՎ, ՈՐՈՎՔ ՄԵԶԻ ԴԵՄ ՍՈԽՄԵՆ ԽԱՆՉԱԲ ԿԵ ԳՈՐԾԵՆ: ԵՌ ԹՈՋ ՄԻՇ
ՏԱՐ, ՈՐ ՓՈՐՁՈՒԹԵԱՆ ՄԵԶ ԻՆՉԱԲ: ԱՅ ՄԵԶ ՉԱՐԵՆ ԱԶԱՏԵ: ՈՐՈՎԵՏԵՇ ՔՈՌԿՈ ԵՆ
ՄԻՇԸ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆԸ, ԶՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՌ ՓՈՎՔԸ. ԱՅՆԵ:»**

Եթէ մարդոց ներկէ իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ պիտի
ներէ ձեզի: Իսկ եթէ մարդոց չներկէ իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ
պիտի չներէ ձեր յանցանքները:

ՍՈՒՐԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՅԱՆ

Բարեկենդան կը նշանակէ բարի կենդանութիւն, խրախնանք, նոյն եւ առատ ուտելիքներով վայելելու օր:

Գլխաւոր շաբաթապահերու նախորդ շաբաթ օրը, կը կոչուի բարեկենդան եւ այդ առիթով կը քոյլատրուի աւելի նոյն ուտել: Եկեղեցական օրացոյցի մէջ յանախ կը հանդիպինք բարեկենդանի յիշատակութեան, որովհետեւ կարեւոր պահերը ունին իրենց բարեկենդանը:

Բայց բարեկենդաններուն մէջ յանկանշական է Մեծ Պահքի նախընթաց կիրակի օրը, որ կը կոչուի ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ:

Բուն բարեկենդանի օրը կը պատրաստեն նոյն սեղան, կը կատարեն դիմակաւոր խաղեր, խրախնանքներ եւ այլն:

Վանքերու մէջ նոյնիսկ Բուն բարեկենդանի օրը որոշ ազատութիւն կը տրուէր եւ այդ օրը ժամանակին կը կոչուէր ԱԲԵՂԱՔՈՂ:

Բուն բարեկենդանի նախորդ օրը՝ Շաբաթ երեկոյեան ժամերգութեան ընթացքին, Եկեղեցւոյ խորանի վարագոյրը կը գոցուի եւ նոյն օրը կը սկսի արդեն ապաշխարութեան շրջանը: Հոգեւոր արարողութիւնները կը մեղմանան, Ս. Պատարագը կը մատուցուի գոյ վարագոյր խորանին ետեւ: Այսպիսով կը սկսի բառականացնել ապաշխարութիւնը:

Եկեղեցւոյ անուանակոչութեան եւ կամ կարեւոր սուրբերու տօներու առիթով, երբ կը մատուցուի հանդիսաւոր Սուրբ Պատարագ, վարագոյրը կը բացւի եւ տեղի կ'ունենայ բաց պատարագ:

Բուն բարեկենդանի շարականները կը պատմեն, թէ ինչպէս ստեղծուեցաւ մարդը եւ ապրեցաւ դրախտի փափկութեան մէջ: Այնտեղ դրախտի մէջ մարդը «ցնծայր զուարեցեալ անտիրական իննդութեամբ», որովհետեւ միշտ կը տեսնէր Աստուծոյ: Բուն բարեկենդանի շարականներու առանցքը «Դրախտի փափկութիւնը», «Դրախտի զուարեցեալ իննդութիւնը» եւ նախատիպ մարդու՝ Ադամի երջանիկ վիճակը կը կազմէ: Քրիստոսը կը յիշատակուի որպէս երկրորդ Ադամ, որ իր միջոցով մարդոց արժանի դարձուց «Դրախտի փափկութեան»:

Բուն բարեկենդանի շարականները, նոյն օրը զուարեցնող մարդոց կը յիշեցնեն նաև Դրախտի հոգեւոր երջանկութիւնը եւ ուրախութիւնը:

Սուրբ Գիրքը կը փոխէ մեր կեանքը

Կը պատմուի, թէ Հիւսիսային Ափրիկէի մէջ մարդակեր մը դարձի կուգայ եւ ինքզինք կը նուիրէ աղօթքի եւ Սուրբ Գիրքի ընթերցանութեան: Օր մը Հանրային պարտէզի մը մէջ նստած երը Սուրբ Գիրք կը կարդար, Ամերիկացի մը կը տեսնէ զինք եւ ծաղրելով կ'ըսէ. «Դո՞ւն, ո՞վ Ափրիկեցի, դո՞ւն ալ սկսար Սուրբ Գիրք կարդալ»: Նորադարձ Ափրիկեցին կը պատասխանէ ըսելով. «Եթէ ես Սուրբ Գիրք չկարդայի, դուն հիմա իմ ճաշ եղած պիտի ըլլայիր»: Այս պատմութիւնը մեզի կը սորվեցնէ, թէ ինչպէս Սուրբ Գիրքը կը նայ փոխել մարդուն կեանքն ու նկարագիրը: Անիկամարդակեր մարդը կը վերածէ մարդակը մարդու:

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒ ԽՐԱՏՆԵՐԸ

ԱՌՈԹՔԻ ԵՒ ԾՈՍՎԱՅՐՈՒԹԵԱԸ ԶՈՐՈՒԹԻՒՆԸ

Աշակերտները առանձին հարցուցին Յիսուսին. «Մենք ինչո՞ւ չկոցակը հանել զայն՝ այսինքն դեմ»: Յիսուս պատասխանեց. «Այդպիսի ոգի մը միայն աղօթքով եւ ծոմապահութեամբ կարելի է հանել» Մտթ. 17.19-21:

Դիւահարութեան եւ պոռնկութեան գոյք ախտերը պահենով եւ աղօթքով կը բուժուին միայն: Ինչպէս որ մարմնի ցաւրը շատ են ու այլատեսակ, եւ ցաւրու համաձայն՝ դեղբ՞րն ալ բազմաթիւ են, նոյնպէս մեղքերը ահազին են ու բազմատեսակ եւ մեղքերու համաձայն ալ ապաշխարութիւնը բազմապիսի է: Ինչպէս, որ ցափի մը դեղը ուրիշ ցաւ մը չի մեղմացներ, այսինքն կրունկը առողջացնող դեղը չի կրնար աչքը բուժել, այսպէս ալ մեղքի մը ապաշխարութիւնը կրնայ օգտակար չըլլալ ուրիշ մեղքի մը: Ահա թէ ինչո՞ւ Քրիստոս կ'ըսէ. «Այս տեսակի մեղքերը ուրիշ ոչ մէկ բանով կը բժշկուին, բայց միայն ծումով եւ աղօթքով» (Մտթ. 17.20): Ինչպէս որ բժիշկը որոշ ցափի դարմանումին համար մասնաւոր դեղ կը յանձնարարէ, նոյնպէս Քրիստոս պոռնկութեան եւ դիւահարութեան համար ծում եւ աղօթք կը բելադրէ:

**Յորդորակներ Բարսեղ Մաշկեւորցի
Վաղը՝ Երկուշարքի 12 Փետրուար
2018, Քառասնօթեայ պահեցողութեան
առաջին օրն է: Պատրաստ ենք մաքրելու եւ սրբելու մեր հոգիները պահեցողութեամբ եւ աղօթքով:**

ՀՈԳԵԱՈՐ ԽՈՐՀՐԱՏՈՒ

Դժուար պահեր կ'ունենանք մեր կեանքին մէջ եւ երբեմն կը յուսահատինք: Եթէ յուսահատինք կարդանք Հո. 8.31-38

Ի՞նչ կրնակը ըսել այս բոլորին դիմաց: Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ կրնայ մեզի հակառակ ըլլալ: Եթէ Աստուած իր Որդիին չինայեց, այլ՝ մինչեւ իսկ զայն մահուան մատնեց մեզի համար, անոր հետ նաեւ ամեն բան ախտի չշնորհե՞ մեզի: Ո՞վ կրնայ մեղադրել Աստուծոյ ընտրեալները: Ո՞չ ոք, քանի Աստուած է արդարացընողը: Կամ ո՞վ պիտի դատապարտէ: Յիսուս Զրիստոսը, որ մեզի համար մեռաւ՝ բայց մանաւանդ յարութիւն առաւ, եւ իմա Աստուծոյ աջ կողմն է ու կը բարեխօսէ մեզի համար: Անշուշտ ո՞չ: Ո՞վ կրնայ, ուրեմն, մեզ բաժնել Զրիստոսի սերեն: Նեղութիւնը, անձկութիւնը, հալածանքը, սո՞վը, մերկութիւնը, վտանգը կամ սո՞ւրը: Ինչպէս Սաղմոսներուն մէջ գրուած է.

**«Քեզի համար՝
մարդիկ մեզ կը սպաննեն
ամեն օր.**

**ոչիարի պէս սպանդանց կը
տանին»:**

Բայց այս բոլորէն շատ աւելի յաղթական դուրս կու գանք շնորհիւ անոր՝ որ մեզ սիրեց: Որովհետեւ համոզուած եմ, որ ո՞չ մահը եւ ո՞չ կեանքը, ո՞չ իրեշտակները, ո՞չ չար ոգիներու իշխանութիւնները, ո՞չ ներկան եւ ո՞չ գալիքը, ո՞չ ալ որեւէ զօրութիւն, ո՞չ վերին եւ ո՞չ ալ ներքին աշխարհները, ո՞չ ալ ուրիշ ստեղծագործութիւնն մը կրնայ մեզ բաժնել Աստուծոյ սերեն, որ մենք ճանչցանք մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի միջոցաւ: